

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԴԻՑԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑԱՐԿՄԱՆ ՁԵՎԱԶԱՓ

ԿԱՐԻՆԵ ՅԱՐԱԼՅԱՆ

Սոցիալական կեցությունը ենթադրում է իրականության յուրացման ոչ միայն ռացիոնալ, այլև իռացիոնալ եղանակներ, որոնց մեջ կենտրոնական տեղ է զբաղեցնում սոցիալական դիցարարությունը: Այն ներկայացվում է որպես կեցության կառուցարկման եղանակ, որն ունի թե՛ համընդհանուր, թե՛ հազվադեպ սոցիոմշակութային տեսանկյուններ: Որպես օրինակ դիտվում են սոցիոմշակութային և պատմական եզրերը, որոնց համատեքստում քննարկվում է սոցիալական միջի հիմնահարցը մի կողմից զանգվածային հասարակության համակարգում, մյուս կողմից՝ հիպերիրականության դաշտում: Արվում է այն եզրակացություն, որ, չնայած դիցարարության գոյաբանական հիմքերին, վերջինիս ծայրահեղ դրսևորումները կարող են վտանգավոր լինել ձևի և բովանդակության ներդաշնակության և, որպես հետևանք՝ հասարակության ողջ արժեհամակարգի ձևախեղման տեսանկյունից: Հոդվածում հատուկ կարևորվում է հասարակական գիտությունների և, մասնավորապես, փիլիսոփայության դերը անհատական և հասարակական գիտակցության ռացիոնալացման գործում:

Բանալի բառեր – *սոցիալական դիցարարություն, սոցիալական զանգված, գերժողովրդավարություն, գերիրականություն, բեմարկում, կեղծանմանակ, հակաթատրոն, սոցիալականություն*

Մասնագիտական գրականության մեջ հաճախ ենք օգտագործում «սոցիալական դիցարանություն», «դիցարարություն», «ապադիցակալանացում», «քաղաքական միջ» և նման այլ հասկացություններ: Ակնհայտ է, որ նույնիսկ ռացիոնալացմանը զուգընթաց՝ մարդը չի ազատագրվում դիցարարության դրսևորումներից և տարբեր սոցիոմշակութային իրավիճակներում ստեղծում է նորանոր միջեր: Այդ պատճառով ժամանակակից սոցիալ-քաղաքական և մշակութային միջերի կառուցվածքը, բովանդակությունն ու գործառությունը դառնում են սոցիալական փիլիսոփայության, քաղաքագիտության, հոգեբանության, սոցիոլոգիայի և մշակութաբանության ուսումնասիրության առարկա:

Հայտնի է, որ արխաիկ հասարակություններում միջն ի սկզբանե գիտակցության ձև էր, որի միջոցով ոչ միայն շրջապատող աշխարհն էր արտացոլվում, այլև ձևավորվում էին սոցիալական խմբերի գործունեության հիմքը կազմող որոշակի նորմեր և կողմնորոշումներ: Սոցիալական կյանքն ու սոցիալական զգացմունքներն ամբողջովին դիցակա-

նացված էին, ինչը գագաթնակետին էր հասնում հատկապես այն ժամանակ, երբ հասարակությունը հայտնվում էր անսպասելի, անկանխատեսելի կամ վտանգավոր իրավիճակներում: Կարելի է նաև ասել, որ հին միֆերն ունեին իրենց սեփական «տրամաբանությունը», և նախնադարյան մարդը կարծես թե չէր առանձնացնում իրեն շրջապատող աշխարհից ու սոցիալական միջավայրից: Բացի այդ՝ մտածողությունը դիֆուզ էր և անբաժանահատ, ինչը նշանակում է, որ այն համարյա չէր տարանջատվում զգացմունքային և գերզգայական շերտերից: Մրա արդյունքն էր բնական և սոցիալական երևույթների նույնականացումը, երբ մարդկային հատկությունները տարածվում էին բնության վրա, իսկ դիցաբանական նախնիներին և մարդկանց, հակառակը՝ վերագրվում էին բնական օբյեկտների հատկություններ: Այս ամենին գումարվում էր նաև աշխարհընկալման սիմվոլիկ բնույթը, ինչպես նաև գործողությունների խորհրդագործական իմաստն ու բովանդակությունը:

Չետագայում՝ պատմության (որպես ռացիոնալացման ճանապարհի) ընթացքում, դիցաբանական գիտակցությունն աստիճանաբար քայքայվեց ու, սկսած յասպերսյան «*առանցքային ժամանակից*», երբ ուրվագծվեց մարդկության պատմական համընդհանուր ուղին, դասական միֆը դադարեց աշխարհայացքային հիմնասյուն լինելուց: Սակայն այն բնավ չանհետացավ, այլ փոխակերպված «վերահաստատվեց» սոցիալական հարաբերություններում: Միգուցե զարմանալի թվա այն, որ մարդը չկարողացավ վերջնականապես հաղթահարել միֆը, բայց հիշելով Ֆ. Նիցշեին ու տեղափոխելով հարցադրման շեշտադրումը *կարողությունից* դեպի *ցանկություն*՝ կարծես զսնում ենք հարցի պատասխանը. *մարդը չհաղթահարեց միֆը, որովհետև չցանկացավ կորցնել կյանքի իմաստը*: Տվյալ պնդումը հստակեցնելու համար հիշեցնենք, որ իր աշխատություններից մեկում Ֆ. Նիցշեն վերաիմաստավորում է Մոկրատեսի, ինչպես նաև նրան հաջորդած Պլատոնի և Արիստոտելի փիլիսոփայությունը՝ հայտարարելով, որ սոկրատիզմն իր ռացիոնալիզմով քայքայեց անտիկ դիցաբանական աշխարհընկալումն ու իր հեգնանքով սպանեց այն՝ փոխարենը ոչինչ չառաջարկելով¹: Ըստ Ֆ. Նիցշեի՝ Մոկրատեսի առաջարկած ռացիոնալ գիտելիքը կարող էր միայն բացահայտել կյանքի անիմաստության «սպանիչ ճշմարտությունը»: Եվ հենց այս ճշմարտության բացահայտումն էր, որ կանխորոշեց հունական մշակույթի վախճանը, ինչպես և կկանխորոշի ցանկացած այլ մշակույթի ավարտ, եթե վերջինս, հետևելով Մոկրատեսին, հայտարարի, որ կյանքի կառուցման նախադրյալները ռացիոնալ են²: Միգուցե սա էր պատճառը, որը նույնիսկ ժամանակակից մարդուն թույլ չտվեց դուրս մղել միֆն իր կեցությանին համակարգից և անցնել իրականության կառուցարկման գուտ բանական, տրամաբանական ձևաչափին:

¹ Տե՛ս **Ницше Ф.** Рождение трагедии из духа музыки. М., Азбука, 2012, էջ 2-7:

² Տե՛ս **Ясперс К.** Смысл и назначение истории. М., Республика, 1994, էջ 19:

Եվ այսպես, փոխակերպվելով միֆը պահպանվեց ու շարունակեց մնալ իրականության (տվյալ դեպքում արդեն սոցիալական իրականության) կառուցարկման կարևոր ձևերից մեկը: Ինչպես գիտենք, մարդու սոցիալական կեցությունը նրա գոյության հիմնական առանցքներից է, որը մշտապես պահանջում է սոցիալական կողմնորոշում և սոցիալական հարմարում (ադապտացիա): Սոցիալական կողմնորոշումն ու հարմարումը ենթադրում են հասարակական վարքի այնպիսի կարևոր հիմքեր, որոնք թույլ են տալիս գնահատել իրավիճակը և գործել ըստ մարդու պահանջմունքներին, հնարավորություններին և կարողություններին ուղղված նպատակների: Կարող ենք նաև ասել, որ հարմարումը սոցիալական կողմնորոշման արտաքին շերտն է, մինչդեռ սոցիալական կողմնորոշման ներքին բաղադրիչներն են որոշակի գիտելիքների, նորմերի, արժեքների համակարգերի յուրացումն ու անձնային և սոցիալական որակների մշակումը: Սա նշանակում է, որ մարդը միշտ յուրացնում է սոցիալական փորձն ու ձգտում է ձևավորել աշխարհի մասին ընդհանրական պատկերացում: Մակայն այս գործընթացները չափազանց բարդ ու բազմաշերտ են, քանի որ, ինչպես հասկացանք, ենթադրում են ոչ միայն աշխարհի ռացիոնալ իմաստավորման ուղիներ, այլև ընկալման իռացիոնալ տարրեր: Միաժամանակ, թե՛ ռացիոնալ, թե՛ իռացիոնալ ընկալումը գերծ չէ իրականության «շեղված» և ինչ-որ առումով «պատրանքային» արտացոլումից, ինչի արդյունքում էլ ստեղծվում են սոցիալական միֆերը: Մակայն չափազանց պարզունակ կլինեք միֆը մեկնաբանել զուտ որպես պատրանք կամ իրականության աղավաղում. միֆի կենսունակությունը ստիպում է ավելի լուրջ մոտենալ հարցին և դիտարկել այն մարդու կեցությային հիմքերի շարքում, քննարկել այն որպես իրականության կառուցարկման մի եղանակ, որն ունի շատ կոնկրետ պատճառներ՝ սկսած մարդու էությունական առանձնահատկություններից, հոգեբանական շերտի յուրահատկություններից՝ վերջացրած տեմպորալ չափումներով ու սոցիումալոգիային ֆոնով:

Հասարակական կյանքում դիցարանականի առաջացման թվարկված պատճառներն ամբողջանում են տեղեկատվական-հոգեբանական մի ազդեցիկ գործոնի ներքո, որն արդեն ուղղվում է հասարակության մեջ համապատասխան սոցիալական ռեակցիայի առաջացմանն ու ցանկալի պատկերացումների ձևավորմանը: Այս նպատակների իրագործման համար չափազանց հաճախ ակտիվացվում է միֆի գրավչությունը, որի արդյունքում վերջինս է՛լ ավելի խորքային ազդեցություն է թողնում և առաջին հերթին՝ զանգվածային գիտակցության վրա, ինչի հետևանքով հենց սոցիալական զանգվածն է դառնում սոցիալական միֆերի հիմնական կրողներից մեկը: Սա բնավ չի նշանակում, որ չկան անհատական միֆեր, և որ անհատը (որպես սոցիալական միավոր) զուրկ է իրականության դիցարանացման դրսևորումներից: Անհատական միֆերի առկայության ու կարևորության մասին խոսել են

Էռնստ Կասիրերը, Ալեքսեյ Լոսնն ու շատ ուրիշներ՝ նշելով, որ աշխարհի մասին իր անհատական միջն ունի յուրաքանչյուրը, ինչպես և յուրաքանչյուրի շուրջ էլ կա որոշակի միջ: Սակայն հասկանալի է, որ զանգվածային գիտակցության ձևավորման պայմաններում իրականության դիցականացման գործընթացները շատ ավելի ընդլայնված են և բազմաշերտ, քանի որ ակնհայտորեն ակտիվանում են էմուլյատիվ (նմանագործության) դրսևորումները, որոնք սկսում են թելադրել վարքի և մտածողության միանման մոդելներ:

Այն, թե ինչով են պայմանավորված զանգվածի մաս կազմելու գրավչությունն ու միաչափության ընտրությունը, սկսած 19-րդ դարից՝ եղել է տեսաբանների ուշադրության կենտրոնում: Մրա հոգեբանական և սոցիալ-փիլիսոփայական բացատրությունը փորձել են տալ Գ. Լեբոնն ու Գ. Տարդը, Ս. Մոսկովիչին և Է. Կանետին, Է. Կասիրերն ու, վերջապես, Խ. Օրտեգան: Այս բոլոր հեղինակները փորձել են բացահայտել տրված ստանդարտներին և կադապարներին համապատասխանելու ձգտումով «օժտված» մարդու կերպարը ու հասկանալ վերջինիս «անատոմիան»: Բնականաբար, մեկնաբանություններն ու նկարագրությունները չափազանց շատ են և բազմաբնույթ: Սակայն այդ շարքում ճիշտ կլիներ կարևորել մի զգացողություն, որը միգուցե զանգվածայնության գրավչության որոշիչներից է: Խոսքը «հպման վախի» հաղթահարման և հավասարության պատրանքի մասին է, որոնք առաջանում են սոցիալական զանգվածի ներսում³: Այդ «երանելի» և սպասված վիճակը հեշտությամբ համոզում է զանգվածային մարդուն հետևել ուղղորդող սոցիալական որոշմներին, ենթարկվել կանխակալ կարծիքներին և գաղափարախոսական կարծրատիպերին՝ վերածվելով սոցիալական միջերի ակտիվ «օգտատիրոջ»: Հասկանալի է նաև, որ այս ամենն ուղեկցվում է քննադատական մտածողության կորստով և պատասխանատվության ծայրահեղ նվազմամբ:

Իրականության «ձևախախտման» խորշերը, որոնք սկսում են բացվել բարոյական, քաղաքական, իրավական և այլ հարթակներում, նկատելի են դարձնում ունիվերսալ մի երևույթ, որն անմիջականորեն կապված է կյանքի դիցականացման հետ: Խոսքը գերիբականության (*հիպերռեալության*) մասին է, որը, ինչպես գիտենք, լայնորեն քննարկել են հետմոդերնիստները: Սակայն կարող ենք ասել, որ առավել նեղ համատեքստում դրան ավելի վաղ անդրադարձել է Խ. Օրտեգան՝ դիտարկելով *գերժողովրդավարությունը (հիպերդեմոկրատիան)* որպես զանգվածային հասարակության քաղաքական մոդել և մանիպուլյատիվ ազդեցությունների դաշտ: Ընդհանրապես թվում է, որ այս «գեր» նախաձանցը պետք է որ ենթադրի ներկայացվող երևույթի բարձրագույն ձևը կամ աստիճանը, սակայն իրականությունն այլ է: Լեզվաբանական այս տարրը գոյաբանական տեսանկյունից կարծես դառնում է

³ Տե՛ս Կանետի Է. *Масса и власть*, М., АСТ, 2020, էջ 17-19:

այն սահմանը, որտեղ երևույթն աննկատորեն վերածվում է հակադիրի: Մասնավորապես, գերժողովրդավարության մեկնաբանությունը, որը ենթադրում է փոքրամասնության գրեթե ոչնչացումը սեփական ցանկություններն ու ճաշակը թելադրող մեծամասնության կողմից, արդեն բացահայտում է մի սադրիչ իրավիճակ, երբ անհատը հեշտությամբ կարող է պարտվել պետությանը: Պատճառն այն է, որ այսպես կոչված գերժողովրդավարությունը «թաքցնում է իրականությունը»՝ ուժեղացնելով պետության դիրքերը զանգվածի և պետության նույնականացման շնորհիվ: Մինչդեռ իրական ժողովրդավարության սկզբունքները ենթադրում են այնպիսի իշխանություն, որը նույնիսկ իր գերիզուրության պայմաններում պատրաստ է սահմանափակել ինքն իրեն և պետական կառույցում մշտապես պահպանել այնպիսի էլքեր, որոնք հնարավորություն կտան այլախոհության գոյությանը: Գերժողովրդավարության դեպքում տեղի է ունենում ուղիղ հակառակը: Պետությունը վերածվում է «անհավանական հնարավորությունների հրեշավոր մի մեքենայի», որը զանգվածային մարդու համար դառնում է հպարտության առարկա: Նա գիտի, որ հենց պետությունն է իր կյանքի երաշխավորը, նա այնքան երախտապարտ է պետությանը, որ նույնացնում է իրեն վերջինիս հետ⁴: Քաղաքական սուբյեկտության նման ընկալումը հասարակական կյանքում հանդիպող ամենադիցականացված դրսևորումներից է, քանի որ սոցիալական զանգվածի ինքնանույնացումը պետության հետ չի արժանանում հակառակ կողմի համարժեք արձագանքին: Պետությունը սնում է զանգվածի այդ համոզմունքը, սակայն չի կիսում այդ կարծիքը: Այդ «համոզված զանգվածը» ընդամենը գործիք է գերպետականացված կյանքի հաստատման համար, որը կնպաստի իշխանության տարածմանն ու զավթողագործությանը՝ անհրաժեշտության դեպքում ոչնչացնելով որևէ ինքնուրույնություն և նույնիսկ կործանելով ճակատագրեր:

Գրեթե անվիճելի է, որ «պետական», «իշխանական» դիցարարության մեխանիզմները կիրառվել և կիրառվում են բոլոր հասարակություններում, քանի որ վերջինիս նպատակադրվածությունը հուշում է հասարակական գիտակցության վերահսկողության կարևորության առաջնայնությունը, որը պայմանավորված է իշխանության մասին բարեպատեհ հասարակական կարծիք ձևավորելու ու հասարակության անվերապահ աջակցությունը ձեռք բերելու անհրաժեշտությամբ, ինչը, բնականաբար, հասարակական համակարգի կայունության և իշխանության անխոչընդոտ վերարտադրության գրավականներից է: Այդ պատճառով կոնկրետ սոցիալ-քաղաքական միջերը հասկանալու և վերլուծելու համար պետք է հստակեցնել, թե ինչի շուրջ են ձևավորվում վերջիններս, որոնք են միջերի ստեղծման մեխանիզմներն ու այն սոցիալ-քաղաքական և մշակութային գործընթացները, որոնք նպաս-

⁴ Տե՛ս **Орtega-и-Gaccet X**. Восстание масс. М., АСТ, 2002, էջ 108-116:

տում են այս միջերի տարածմանն ու ազդեցության գոտու ձևավորմանը: Այս տեսանկյունից կարող ենք ասել, որ զանգվածային հասարակության ձևաչափում նկարագրված «պետություն-հասարակություն» քաղաքական մոդելը իրականության դիցականացման ամենանպաստավոր դաշտերից է, որը ժամանակի ընթացքում ծնունդ է տալիս ամբողջատիրական համակարգերին:

Լինելով կյանքի իռացիոնալ մոտիվների գերի և ունենալով ինքնակազմակերպման խնդիր՝ զանգվածային մարդն ընտրում է պետությունը որպես իր կյանքի պատասխանատու, որին պատրաստ է պաշտել և անձնագոհաբար նվիրվել: Ի դեպ, անձնագոհությունն ու այլասիրությունն այս համատեքստում հատուկ առանձնացրել է ամերիկացի գրող, փիլիսոփա Էյն Ռենդը իր «ռացիոնալ էգոիզմի» տեսության մեջ: Հեղինակը համոզված է, որ այլասիրությունը չարիք է, քանի որ այն ոչ թե օգնություն է, այլ անձնագոհություն: Նա այլասիրության ծայրահեղ, սահմանային դրսևորումներ է համարում նացիստական Գերմանիան և կոմունիստական Ռուսաստանը, որտեղ յուրաքանչյուրից պահանջվում էր անձնագոհություն առաջին հերթին, հանուն պետության: Ամփոփելով այս միտքը՝ Ա. Ռենդը այլասիրությունը դիտում է որպես բոլոր բռնապետությունների հիմք⁵: Ընդհանրացնելով զանգվածային մարդու սցիալ-քաղաքական նկարագիրը՝ կարող ենք ասել, որ գերժողովրդավարության չափումներում «սավառնող» մարդն իր աշխարհիկալիմամբ, բարոյականությամբ ու դաստիարակությամբ դառնում է այն «դասական» սուբյեկտը, որը պատրաստ է հեշտությամբ թե՛ կլանել բոլոր տեսակի սցիալ-քաղաքական միջերը, թե՛ տարածել դրանք:

Այժմ անցում կատարելով գերժողովրդավարությունից գերիրականություն՝ փորձենք նկարագրել դիցականացման այն մեխանիզմները, որոնք ամբողջացան հետմոդեռնիստական աշխարհում և քննարկվեցին ու ներկայացվեցին արդեն կեղծանմանակման (սիմուլյատիվ) գործընթացների օրինակներով: Այս մեկնաբանությունները իրականության դիցականացման գործընթացներն ու դրսևորումները կապեցին առաջին հերթին նշանագիտական համակարգի առանձնահատկությունների հետ և հնարավորություն տվեցին մեկնաբանելու հիպերիրականությունը որպես իրական մոդելների *բացակայության տարածք*: Ընդհանրապես, կարող ենք նաև ասել, որ իրականության դիցականացման եղանակներն ու աստիճանները հնարավոր է չափել հենց այս սիմվոլիկ համակարգի կտրվածքով՝ իրականության հետ նշանի, նշանակի և կերպարի հարաբերությունների տեսանկյունից: Մա չափազանց կարևոր և բնութագրիչ ձևաչափ է, քանի որ, ինչպես նշում է Է. Կասիրերը, հենց սիմվոլն է մարդու էության դուռը բացող բանալին, բոլոր էակներից հենց մարդն է, որը «սիմվոլիկ մտածողությամբ օժտված

⁵ Տե՛ս **Бранден Н.** Здоровый разум против мистицизма и самопожертвования. // В кн. **Рэнд А.** Добродетель эгоизма (с добавлением статей Натаниэля Брандена). М., АЛЬПИНА, 2020, էջ 62-76:

կենդանի»⁶ է: Ինչ- որ իմաստով մեր սիմվոլիկ ակտիվությունն այն հիմնական ֆունն է, որը, հեռացնելով մեզ ֆիզիկական ռեալությունից, տանում է դեպի մշակութայինը: Բացի է. Կասիրերից՝ այս թեմային անդրադարձել են Ռ. Բարտը, Կ. Լևի-Ստրոսը, Ժ. Բոդրիարը և ուրիշներ, որոնք սոցիալական միֆի ձևավորման գործընթացը անմիջականորեն կապում են նշանային համակարգում կերպարի «դիրքավորման» հետ: Այս առնչությամբ Ժ. Բոդրիարը նշում է, որ կերպարն իրականության ներկայացումից մինչև կեղծանմանակում և կեղծանմանակի ստեղծում անցնում է հետևյալ փուլերը.

- կերպարն արտացոլում է ֆունդամենտալ ռեալությունը,
- կերպարը թաքցնում և աղավաղում է ֆունդամենտալ ռեալությունը,
- կերպարը թաքցնում է ֆունդամենտալ ռեալության բացակայությունը,
- կերպարն ընդհանրապես չունի առնչություն որևէ ռեալության հետ և ինքնին կեղծանմանակ է⁷:

Վերջին կետերը շեշտում են, որ կեղծանմանակն ու կեղծանմանակումը իրականության դիցականացման համատեքստում կարող են քննարկվել որպես սահմանային դրսևորումներ, որոնք ոչ այնքան ձևախեղում են իրականությունն ու նպաստում վերջինիս ոչ համարժեք ընկալմանը, որքան, ինչպես արդեն նշվել է, թաքցնում են այդ իրականության բացակայությունը:

Կեղծանմանակման սցենարներն իրականացվում են սոցիալականության բոլոր շերտերում՝ քաղաքականությունից մինչև ժամանց: Ժ. Բոդրիարը բերում է դասական օրինակ. Դիսնեյլենդը՝ որպես պատրանքի ու երևակայության խաղ, որպես միահյուսված կեղծանմանակների շղթա, որը ոչ այնքան երևակայական աշխարհ է, որքան սոցիալական միկրոտիեզերք, որը հավակնում է լինել մանկական, որպեսզի համոզի, որ մեծահասակներն այլ տեղ են՝ «իրական» աշխարհում, որպեսզի թաքցնի այս աշխարհի իրական մանկամտությունը⁸: Նույն՝ «երևակայականի էֆեկտը» թաքցնում է իրականի բացակայությունը քաղաքական դաշտում: Այստեղ, օրինակ, այդ էֆեկտը կարելի է ստանալ այսպես կոչված սկանդալի միջոցով, որը կքողարկի փաստերի և դրանց բացահայտման տարբերությունը, որը վրդովմունքի ու բացահայտման «բարոյական վերնաշենքի» արհեստական ակտիվացման շնորհիվ կքողարկի առկա անբարոյականությունն ու անսկզբունքայնությունը: Կեղծանմանակման օրինակների այս շարքը կարելի է ընդլայնել հասարակական կյանքի ցանկացած կտրվածքով:

Ամփոփելով սոցիալական դիցարարության տարատեսակ դրսևորումները՝ կարող ենք եզրակացնել, որ այն իր իռացիոնալ հիմքերով կե-

⁶ Кассирер Э. Философия символических форм. Т. 2, Мифологическое мышление. М.; СПб, Университетская книга, 2002, 280 с.

⁷ Տե՛ս Բոդրիար Ժ. Симулякры и симуляции. М., ПОСТУМ, 2016, էջ 12:

⁸ Տե՛ս նույն տեղ, էջ 20-23:

ցութային կապերի առանձնահատկության տեսանկյունից միշտ բացահայտում է ձևի և բովանդակության անհամաչափությունը, որի շրջանակներում շեշտը դրվում է ձևի, պատկերի՝ որպես տարածության և ժամանակի մեջ գոյության եղանակի վրա, իսկ բովանդակային կապերն ու հարաբերությունները արհամարհվում են: Ժամանակի ընթացքում արդի տեղեկատվական աշխարհում իրականության դիցականացման մեխանիզմն արդեն ավելի ու ավելի հաճախ ոչ միայն տեղափոխվում է առարկաների, երևույթների և դրանց նշանների միջև խախտված կապի տարածք, այլև ստանում է տեղեկատվության սպառման առանձնահատուկ ձևաչափ, որն անհամեմատ ակտիվացնում է իրականության դիցականացման դրսևորումները: Կարող է հարց ծագել, թե ինչու կեղծանմանակման գործընթացներն առանձնացան հենց այսօրվա աշխարհում: Պատասխանը պարզ է և կապված է տեղեկատվական դաշտի առանձնահատկությունների, տեղեկատվական հոսքերի ինտենսիվության հետ: Դա մի կողմից մեծ հնարավորություններ բացեց մարդու առջև, մյուս կողմից այս աշխարհում կողմնորոշվելու իմաստով ստեղծեց բազմաթիվ բարդություններ. ակնհայտ դարձավ, որ թե՛ հոգեբանական, թե՛ ինտելեկտուալ տեսանկյունից նման քանակի տեղեկատվության յուրացումը մարդու համար մեծ ծանրաբեռնվածություն է, որն առաջացնում է տեղեկատվական հոսքերին հարմարվելու խնդիր: Այս պայմաններում ավելի ու ավելի հաճախ սկսեց «սպողել» իմաստը, քանի որ տեղեկատվությունն իր քանակական և, որպես հետևանք, արդեն իսկ որակական բնութագրիչներով նպաստեց սեփական բովանդակության, հաղորդակցման ու, վերջապես, սոցիալականության ոչնչացմանը: Գի Դեբորի «ներկայացման հասարակությունը» դարձավ բազմաթիվ առանցքային բեմականացումների հանդիսատեսի մի հանրույթ, քանի որ տեղեկատվական դաշտը սկսեց բեմարկման ակտիվ գործընթաց. հաղորդակցություն ստեղծելու փոխարեն տեղեկատվությունը «բեմարկեց» այդ հաղորդակցությունը, իմաստ ստեղծելու փոխարեն «բեմարկեց» իմաստը: Միաժամանակ, հետևելով միֆի «տրամաբանությանը», կրկին բեմականացվում է ցանկային, բեմականացվում է գրավիչը, որպեսզի ձևավորվող միֆերի տարափում մարդը չմնա պասիվ և ոգևորվի սեփական մասնակցության պատրանքներով: Այս իրավիճակը կոչվել է «հակաթատրոն», որն իմաստային առումով փորձում է բացահայտել իրականության դիցականացման պայմաններում սոցիալականության կորստի փաստը:

Այսպիսով, իրականության կառուցարկման վերը ներկայացված դիցականացված դրվագներն ու սոցիալական միֆերի թե՛ համընդհանուր, թե՛ հազվադեպ բաղադրիչները հաստատում են այն միտքը, որ միֆն ու իրականության դիցականացումը մեր կեցութային հիմքերի շարքում են և մեզ երբեք չեն լքում: Այս իրողությունը, իհարկե, մի կողմից «մարդկային» ամրագրումներից մեկն է, մյուս կողմից՝ այն, ինչի մաքսիմալացումն ու անհաղթահարելիությունը կարող են իրական սպառնալիք

դառնալ հասարակական կյանքի ռացիոնալ և արդյունավետ կազմակերպման համար: Այս տեսանկյունից հասարակական գիտությունների և հատկապես փիլիսոփայական մտքի դերն ու նշանակությունը դառնում են գրեթե անգնահատելի, քանի որ քննադատական և համակարգային մտածողության ձևավորումն ու զարգացումը իրականության սթափ գնահատման և համարժեք արտացոլման գրավականներից են:

КАРИНЕ ЯРАЛЯН – Социальное мифотворчество как формат структурирования действительности. – Социальное бытие человека предполагает как рациональные, так и иррациональные способы освоения действительности, среди которых центральное место занимает социальное мифотворчество. В статье делается попытка демонстрации последнего как способа конструирования бытия, который имеет как универсальные, так и уникальные социокультурные аспекты. В качестве примера автор рассматривает два социокультурных и исторических среза, в контексте которых анализируется тема социального мифа в системе массового общества, а также специфика мифологизации действительности в поле гиперреальности. В итоге автор приходит к выводу, что несмотря на онтологические основания мифотворчества, крайние проявления последнего опасны с точки зрения нарушения формально-содержательного баланса и, как результат, нарушения всей ценностной системы общества. В статье особая роль уделяется общественным наукам, и, в частности, философии, которая должна способствовать рационализации индивидуального и

Ключевые слова: социальное мифотворчество, социальная масса, гипердемократия, гиперреальность, инсценировка, симулякр, антитеатр, социальность

KARINE YARALYAN – Social Mythmaking as a Format of Structuring Reality. – The social nature of human existence implies both rational and irrational means through which the construction of reality takes place, amongst which social mythmaking plays a central role. This article, therefore, attempts to demonstrate the latter as a method of structuring existence – one that has both universal and unique socio-cultural aspects. To exemplify, the author discusses two socio-cultural and historical sections, within the framework of which social myth in the system of mass society is analyzed alongside the specificity of the mythologization of reality in the field of hyperreality. Consequently, the author concludes that despite the ontological basis of mythmaking the extreme manifestations of the latter could be detrimental in the sense that these may undermine the formal-content balance, subsequently resulting in the destruction of the entire value system of society.

Key Words: social mythmaking, social mass, hyper democracy, hyperreality, staging, simulacrum, anti-theatre, sociality